ԿԱՐԾԻՔ

Տաթևիկ Սլավիկի Մովսիսյանի

«ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման հիմնախնդիրների լուծման ուղիները կրթական բարեփոխումների համատեքստում»

խորագրով ԺԳ. 00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումները հնարավոր է արդյունավետ իրականացնել, եթե շարունակաբար ներմուծվում են նոր մոտեցումներ, ժամանակակից նորարարական տեխնոլոգիաներ, որոնք իրականացվում են հստակ մշակված ռազմավարությամբ: Նշված համատեքստում արդիական են մնում բարձրագույն կրթության որակի ապահովման հիմնախնդիրները, դրանց լուծման նոր ուղիների փնտրտուքը, կրթական բարեփոխումների համապատասխան մեթոդաբանական հիմքի ապահովումը:

Ատենախոսը նշում է, որ ՀՀ որակի ապահովման հիմնախնդիրները հիմնականում գիտական հիմնարար հետազոտության չեն ենթարկվել: Հաշվի առնելով հետազոտության արդիականությունը՝ Տաթևիկ Մովսիսյանն առաջարկում է բարձրագույն կրթության ոլորտի հետագա զարգացմանն ուղղված նոր ուղիներ: Ատենախոսը հանգամանորեն ուսումնասիրել է բարձրագույն կրթության որակի ապահովման հայեցակարգային դրույթները, ինչպես նաև բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման ոլորտի եվրոպական և ամերիկյան առաջավոր փորձը: Ընդ որում՝ ատենախոսը հետազոտությունը կատարել է ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային շրջանակի ձևավորման ու զարգացման տեսանկյունից: Հետազոտության հիմնական խնդիրներից մեկը ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման օրենսդրական հիմքերի վերլուծությունն է, ինչը բավականին դժվար խնդիր է, քանի որ ատենախոսն ստիպված է եղել ուսումնասիրել ոչ միայն հսկայածավալ գիտամանկավարժական գրականություն, այլև օրենսդրական փաստաթղթեր: Համարձակ քայլ է նաև այն, որ ատենախոսը փորձում է գնահատել

ՀՀ բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման գործընթացի արդյունավետությունը: Այդ նպատակով ատենախոսը հավատարմագրման մի շարք մոդելներ է ուսումնասիրել և կարողացել հիմնավորել հավատարմագրման գործող մոդելի արդիականացման անհրաժեշտությունը: Հետազոտության կարևորագույն նորույթներից մեկն այն է, որ Տաթևիկ Մովսիսյանը մշակել է բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների կազմակերպման նոր մոդել, որն ընգրկում է նաև ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման նոր չափանիշներն ու չափորոշիչները և բուհերի կառուցվածքային ստորաբաժանումների ինքնավերլուծության ձևաչափը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 194 էջ:

Ներածության մեջ ատենախոսը հստակ ձևակերպում է թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակն ու խնդիրները, հետազոտության գիտական նորույթը, պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Բարձրագույն կրթության որակի ապահովման գիտատեսական հիմքերը» բաղկացած է հինգ ենթագլխից, որտեղ ատենախոսը հանգամանորեն ներկայացնում է բարձրագույն կրթության որակի ապահովման հասկացութային շրջանակը: Վերջինս բավականին դժվար խնդիր է, քանի որ ատենախոսը շեշտադրում է հասկացական-կարգային ապարատի հասկացութային կամ կոնցեպտուալ հայեցակերպը: Դրական է նաև այն, որ ատենախոսը վերլուծության արդյունքում վերլուծում է համեմատական կտրվածքով բարձրագույն կրթության որակի ապահովման առավել տարածված մոդելները, բացահայտում է դրանց ընդհանրությունները, տարբերությունները և առանձնահատկությունները:

Առաջին՝ «Բարձրագույն կրթության որակի ապահովման հասկացութային շրջանակը» ենթագլխում ատենախոսը սահմանում է կրթության «որակ» և «որակի ապահովում» եզրույթները:

Ատենախոսության երկրորդ՝ «Բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների պատմական զարգացումը» խորագրով ենթագլխում ատենախոսը քննության է առնում ԵԲԿՏ-ում որակի ապահովման գործընթացները, դրանց ձևավորման ու զարգացման չորս փուլը, ինչպես նաև բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտում առաջնային դերակատարություն ունեցող միջազգային կառույցների գործունեությունը: Դրական է այն, որ Տաթևիկ Մովսիսյանը վերլուծում է ոլորտային հիմնախնդիրների լուծումը խթանող եվրոպական փաստաթղթերը:

Երրորդ «Բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի կառուցվածքը» ենթագլխում ատենախոսը ներկայացնում է բարձրագույն կրթության որակի ներքին և արտաքին ապահովման համակարգերի փոխկապակցված բաղադրիչները:

«Բարձրագույն կրթության որակի ապահովման մոդելների գործարկման սկզբունքներն ու առանձնահատկությունները» խորագրով չորրորդ ենթագլխում ատենախոսը վերլուծում է զարգացած երկրներում հայտնի այն մոդելները, որոնք ընկած են նրա կողմից առաջարկվող բարձրագույն կրթության որակի ապահովման մոդելի հիմքում:

Հինգերորդ՝ «Բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման միջազգային փորձը» ենթագլխում ատենախոսը վերլուծում է ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Նիդերլանդների ու Ֆլանդրիայի որակի ապահովման հեղինակավոր գործակալությունների գործունեությունն ու արտաքին գնահատման մոտեցումները:

«ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի ձևավորման ու զարգացման ռազմավարական մոտեցումները» խորագրով երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ «ՀՀ բարձագույն կրթության որակի ապահովման ազգային շրջանակի ձևավորման ու զարգացման նախադրյալները» խորագրով ենթագլխում ատենախոսը վերլուծում է ՀՀ ՈԱԱՇ-ի ձևավորման ու զարգացման փաստաթղթային հենքը, սահմանում «ՀՀ ՈԱԱՇ» հասկացությունը:

Երկրորդ՝ «ՀՀ-ում բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի պետական ռազմավարական մոտեցումները» ենթագլխում ատենախոսը վերլուծում է

ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի պետական ռազմավարական մոտեցումները և հիմնավորում է բարձրագույն կրթության որակի ապահովման պետական ռազմավարական մոտեցումների վերանայման անհրաժեշտությունը:

Երրորդ՝ «ՀՀ բարձրագույն կրթության սուբյեկտների ռազմավարական մոտեցումները որակի ապահովման ոլորտում» ենթագլխում ատենախոսը բացահայտում է ռազմավարական կառավարման ու որակի ապահովման փոխկապակցվածությունը, վերլուծում է ՈԱԱԿ-ի և ՀՀ 12 հավատարմագրված բուհերի ռազմավարական ծրագրերն ու քաղաքականության իրականացման տարբեր մոտեցումները:

Երրորդ գլուխը՝ «ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի արդի հիմնախնդիրներն ու զարգացման հեռանկարները» բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին «ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի օրենսդրական կարգավորման հիմնախնդիրները կրթական բարեփոխումների համատեքստում» ենթագլխում ատենախոսը վերլուծում է բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի օրենսդրական հիմքերը և հիմնավորում որակի ապահովման համակարգային և ինստիտուցիոնալ վերանայման անհրաժեշտությունը բարձրագույն կրթության համակարգի զարգացման արդի փուլում:

Երկրորդ՝ «ՀՀ բուհերի որակի ապահովման հիմնախնդիրները ԵԲԿՏ-ին ինտեգրման համատեքստում» ենթագլխում ատենախոսը ներկայացնում է իր կողմից իրականացված ՈԱԵՉՈՒ-ի 10 չափորոշիչների շրջանակում ՀՀ 15 հավատարմագրված բուհերի որակի ապահովման համակարգերը՝ հաշվի առնելով որակի ապահովման եվրոպական և ազգային չափանիշների համապատասխանեցման հնարավորությունները:

Երրորդ՝ «ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի կազմակերպման և իրականացման արդյունավետության գնահատում» ենթագլխում ատենախոսը ներկայացնում է իր կողմից իրականացված 14 հավատարմագրված բուհերի ու ոլորտի ներկայացուցիչների հետ հարցումների ու հարցազրույցների

արդյունքները, որոնք վերաբերում են ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացին:

Չորրորդէ «ՀՀ-ում բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների կազմակերպման նոր մոդել» ենթագլխում ատենախոսը ներկայացնում է բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների կազմակերպման նոր մոդելը:

Ընդհանուր առմամբ իրականացված է բավականին հետաքրքիր, տեսական և գործնական նշանակություն ունեցող աշխատանք: Այն տրամաբանորեն ավարտուն, ինքնուրույն աշխատանք է, արդիական է, ունի գիտական նորույթ: Ատենախոսին հաջողվում է հստակ տեսական և մեթոդաբանական դիրքերից հիմնավորել իր կողմից առաջակվող որակի ապահվման մոդելը: Սեղմագիրը և հոդվածները ամբողջությամբ արտացոլում են ատենախոսության բովանդակությունը: Ատենախոսության լեզուն և ոճը համապատասխանում ակադեմիական գրագրության պահանջներին:

Կարծում ենք՝ որոշ դիտարկումներ կօգնեն ատենախոսին նոր տեսանկյունից քննության առնել հետազտության հիմնահարցերը.

1. Ատենախոսը ճիշտ կլիներ շեշտադրեր կրթության որակի ապահովման գիտական մոտեցումների դերը, քանի որ ռազմավարական մոտեցումներն ինչ-որ առումով ածանցվում են գիտական մոտեցումներից:
2. Ճիշտ կլիներ կիրառել ոչ թե «քաղաքականություններ», այլ «քաղաքականություն» եզրույթը, քանի որ հայերենում -ությունը հոգնակիակերտ է:
3. Քննության առնելով ՀՀ-ում որակի ապահովման ոլորտի օրենսդրական անկատարության հիմնահարցը՝ ինչ-որ առումով ատենախոսն ընդլայնում է հետազոտության առարկայի սահմանները, քանի որ օրենսդրական բարեփոխումները շատ դեպքերում ներմուծվում են առանց հաշվի առնելու ՀՀ կրթության իրական իրողությունները:

Այսպիսով, Տաթևիկ Սլավիկի Մովսիսյանի «ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման հիմնախնդիրների լուծման ուղիները կրթական բարեփոխումների համատեքստում» խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ

գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԲՈԿ-ի կողմից ԺԳ.00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, և հեղինակն արժանի է իր կողմից հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Մանկ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ի. Կ. Կարապետյան

Պրոֆեսոր Ի. Կ. Կարապետյանի ստորագրությունը հաստատում եմ.

«Վ. Բրյուսովի պետական համալսարան» հիմնադրամի

գիտական քարտուղար՝ Հ. Հ. Փիլավջյան

28.03.2023թ.